600.0249.31.08.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

31 օգոստոսի 2016 թվականի №249Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի №477Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՔԱՐԵՎԱՐԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի օգոստոսի 4-ի և 22-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 24-ի «ՔԱՐԵՎԱՐԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՔԵՅԷՆԵՐՋԻ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №477Ա որոշման մեջ «2017 թվականի դեկտեմբերի 24-ը» բառերը փոխարինել «2016 թվականի օգոստոսի 31-ը բառերով»:
2. Որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ՔԱՐԵՎԱՐԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ՔԵՅԷՆԵՐՋԻ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0569 լիցենզիայի պայմանների 6-րդ և 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 976 կՎտ հաշվարկային հզորությամբ

«ՔԵՅԷՆԵՐՋԻ» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:»,

«9. «ՔԵՅԷՆԵՐՋԻ» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 1000 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ ПЛ-500/10, 500 կՎտ, 2016թ,
2) գեներատոր №1՝ СГ-2-500-16У3, 500 կՎտ, 2012թ,
3) հիդրոտուրբին №2՝ ПЛ-500/10, 500 կՎտ, 2016թ,
4) գեներատոր №2՝ СГ-2-500-16У3, 500 կՎտ, 2013թ:»:

3. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2014 թվականի դեկտեմբերի 3-ի №652-12136 և 2016 թվականի ապրիլի 4-ի №652-2892 գրություններով ներկայացված №ՀԲԵՆ14/77-01 երաշխիքով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև «ՔԵՅԷՆԵՐՋԻ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածի համար ստանձնած երկու միլիոն չորս հարյուր քառասուն հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
31 օգոստոսի 2016թ.
ժամը 16[00]